

ՄԻՍՍԻՕՆԱՐՆԵՐԸ ԹԱՒՐԻԶՈՒՄ

Կաթոլիկ և բողոքական միսիօնարները գործում են նաև հայերի մէջ Թաւրիզում, Թեհրանում, Սպահանում: Մենք կանզ կ'առնենք դրանց գործունէութեան մասին Թաւրիզում, որ մեզ աւելի ծանօթ է: Բողոքականներն սկսել են իրանց պրօպագանդան Թաւրիզի հայերի մէջ դեռ 1873 թւականից, իսկ կաթոլիկները միայն անցեալ տարուանից:

Բողոքականները Թաւրիզում ունեն թէ տղայոց և թէ օրիորդաց գպրոց: Բողոքականները թէն 1873-ին են սկսել իրանց գործունէութիւնը, բայց գպրոց հիմնել են ուշ, 1877 թւին: Այդ տարին բացւել է միայն օրիորդաց գպրոցը, իսկ 1880 թւին բացւել է և տղայոց գպրոցը: Լիլաւա թաղում, ունեն մի մեծ և ընդարձակ պարտէզ, ուր շինուած է տղայոց գպրոցը. կան զիշերօթիկ աշակերտների համար սենեակներ, կան և ուրիշ սենեակներ, ուր ավրում է գպրոցի տնօրէնը: Օրիորդաց գպրոցը գտնուում է Ղալաթազում, իրանց սեփական շէքում:

Այդ ուսումնարաններից տղայոցը ունի 8, օրիորդացը 6 տարուայ դասընթաց, դրանցից զատ ունեն և մանկապարտէզ, ուր սովորում են 5—6—7 տարեկան երեխաներ:

Ճատ տարօրինակ է սրանց գասատութիւնը:

Առաւտեան դասերի *) սկզբում լինում է երկար ժամերգութիւն, երգում են մի հոգեսր երգ, ապա ուսուցիչներից մէկը կարդում է աւետարանից մի դլուխ, մանրամասն բա-

*) Պարսկաստանում դասերի մի մասը լինում է առաւտեան, միւս մասն էլ ճաշից յետոյ, այսպէս են և լիլաւայի և Ղալայի գոլբոցներում—3 դասը առաւտեան, իսկ 2-ը ճաշից յետոյ:

ցատրում է աշակերտներին, դրան հետեւում է մի աղօթք, և յետոյ աշակերտները խմբովին աւետարանից մի կտոր անգիր տուում են ու նոր ցրուում դասարանները, Այդ տեսում է $\frac{1}{2}$ ժամ:

Ասացի, որ տղայոց դպրոցը ունի 8 տարուայ դասընթաց, իսկ օրիորդաց դպրոցը՝ 6, այն ինչ տղայոցը ունի 4 ուսուցիչ, իսկ օրիորդաց դպրոցը՝ երեք (մէկը ուսուցչուհի). բայց այդ չը կան և դասարաններ. ահա դրա համար իւրաքանչիւր սենեակում նստում են երկու դասարանի աշակերտներ, մի դասարանցիներին տրուում է որեէ զբաղմունք, ընդհանրապէս դրաւոր, կամ դասեր են սերտում, իսկ միւսների հետ պարապում է ուսուցիչը:

Այդ դպրոցներում աշակերտները և աշակերտուհիները ձըրիավարժ են մեծ մասով: Տրուում են ումանց նաև հագուստ և դասական պիտոյք: Վերջերս սկսել են սովորողներից նաև շատ չնշին թոշակ ստանալ: Այժմ տղայոց դպրոցը ունի մօտ 100 աշակերտ, իսկ օրիորդաց դպրոցը մօտ 5 աշակերտուհի:

Բողոքականները ահա 29 տարի է, ինչ սկսել են իրանց պրօպագանդան Թաւրիկում, բայց նրանց գեռ չէ աջողուել հայ բողոքական ընտանիք ունենալ: Եթէ կան էլ, այն էլ ընտանիքի մէկ, շատ-շատ երկու անգամն են, իսկ համոզուած են դըրանք, այդ գեռ հարց է: Որ աջողութիւն չունեն հայերի մէջ, այդ խոստովանուում են հէնց իրանք միսափօնարները, եւ ինչպէս պատմում են, գեռ չէ պատահել, որ տեղացի հայ բողոքականը մեռնելիս չը կանչէ հայ քահանայ և մնեայ չը գայ:

Թաւրքերի և պարսիկների մէջ բողոքական միսափօնարները բնաւ աջողութիւն չ'ունեն: Թաւրքերը, մանաւանդ դրանց հոգիուրականները հակակրութեամբ, նոյն իսկ ատելութեամբ են վերաբերում դէպի բողոքականները: Առհասարակ նրանք շատ քչերի կողմից են համակրանք վայելում և գործում են չնորհիւ իրանց դրամական ապահովութեան:

Անցնենք կաթոլիկ միսափօնարների գործունէութեան:

Մօտ երկու տարի է, որ կաթոլիկ լազարիստ միսափան բացել է Թաւրիկում դպրոց և սկսել իր պրօպագանդան:

Կաթոլիկ միսափօնարները Թաւրիկում առ այժմ գործում են միմիայն դպրոցի միջոցով:

Աշակերտների թիւը մօտ 60 հոգի է: Ընդհանրապէս տեղացիները հակակրում են կաթոլիկներին, մանաւանդ այդ աւելի նկատելի է Թաւրիկում, բայց իրանց զաւակներին ուղարկում են նրանց դպրոցը՝ շահագիտական տեսակէտից առաջնորդուելով. նրանք կը սովորեն մի լեզու և առետրի մէջ կը գոր-

ծաղրեն, գլուխի կը պահեն գոյութեան կռւում: Այսպէս են մը-
տածում և դատում ծնողները: Ճիշտ է, սովորում են մի լեզու,
և կարող են գլուխ պահել կեանքի մէջ, բայց ինչ գնով են այդ
ձեռք բերում, ինչ են կորցնում դրա դիմաց: Ահա այդ աչքի
առաջ չեն ունենում կաթոլիկների դպրոցում սովորող աշա-
կերտների ծնողները:

Կաթոլիկները ունեն նաև գիշերօթիկ աշակերտներ, գա-
ւառացիներ, թւով 10—15: Այդ աշակերտները շաբաթներով,
ամիսներով վակուած են մնում դպրոցում: Գիշերօթիկների
երթեեկութիւնն է դպրոցից եկեղեցի, եկեղեցուց դպրոց, մէկ
էլ տարեկան մի երկու անգամ, այն էլ զատկական տօներին,
թոյլատրուում է նրանց դուրս գալ, այցելել բարեկամներին, մի
քիչ անցկացնել նրանց մօտ: Հէնց գրանով պէտք է բացատրել
այն, որ կաթոլիկ միսսիօնարները թոյլ չեն տալիս ցանկացող-
ներին և հետաքրքրուողներին ներկայ գանուել դասաւութեա-
նը, մանրամասն ծանօթանալ դպրոցի հետ, ինչպէս այդ պա-
տահեց և ինձ հետ:—Կը տեսնենք դիրեկտորին և կը խօսենք այդ
մասին, տեսնենք կարելի՞ է, թէ չէ. ևս ձեզ կը յայտնեմ, պա-
տասխանեց ինձ և ընկերոջս աւագ ուսուցիչը:

Հեռանալիս անմիջապէս իմացանք, որ դիրեկտորը Ուր-
միայումն է, այս մէկ. երկրորդ՝ այդ միսսիօնարը այնքան իրա-
ւունք ունէր, որ կարող էր այդ հարցը վճռել, և երրորդ՝ մին-
չև այժմ դեռ պատասխան չեմ ստացել: